ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՆՀՈՒՍԱԼԻ ՎԱՐԿԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ և ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Շմավոն Ավագյան 30.05.2024 14:10:37	Հիշյալ օրենքի ընդունումը կխթանի բնակչության կողմից վարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանը: Բացի այդ բարեխիղճ ու պարտաճանաչ հարկատուների հաշվին մարվում են անպարտաճանաչ վարկառուների վարկերը, որը արդարացի չէ: Մինչև 1 մլն դրամ պարտավորություն ունեցող և աշխատող Անհուսալի դասով դասակարգված պարտապանները իրենց աշխատավարձից կարող էին մարել այդ վարկերը, սակայն ցանկություն չեն ունեցել, հիմ ամեր վճարած հարկերից ցանկանում եք մարել այդ մարդկանց վարկերը: Սա խտրականության արտահայտման ձև է: Ցանկանում եք օգնել,	Առաջարկը չի ընդունվել: Աջակցությունը չի իրականացվելու այլ հարկատուների կողմից իրականացված հարկերից, այլ միայն շահառուների կողմից վճարած հարկերից՝ որոշակի սահմանափակումներով: Քանի որ ծրագրով նախատեսում ենք, որ շահառու կարող են դառնալ միայն 3 և ավել տարի վաղեմությամբ անհուսալի վարկեր ունեցող քաղաքացիները, ապա այն չի կարող բերել անպարտաճանաչության խթանմանը. անհուսալի վարկառու	

	ուրեմն օգնեք բոլորին, կամ ոչ մեկին: ՀԳ բացառություն կարող են կազմել միայն հաշմանդամություն ունեցող, պատերազմի հետևանքով տուժած քաղաքացիները:	դառնալը ուղեկցվում է մի շարք անցանկալի երևույթներով և դժվարություններով, հետևաբար, այս խմբում հայտնված քաղաքացիները հիմնականում օբյեկտիվ սոցիալական պատճառներ են ունեցել: Ծրագիրը նպատակ ունի աջակցել սոցիալապես դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացիներին՝ աշխատելու միջոցով իրենց իրավիճակը բարելավելու և տնտեսապես ակտիվ դառնալու համար:	